

Ի. Ռ. Մաժրագրեկյան

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱՅՆԵՐԸ

(ՀԵԿԱԿԱՆ ԵՎ ԱՐԱՐԱԿԱՆ)

Թումանյանի ո՛ր հեկիարն էլ որ մենք վերցնելու լինենք (լինի քաղամանական, րե ինքնուրույն), նրանում արտառայտված կգտնենք պոետի փիլիսոփայության և աշխարհայացքի այս կամ այն կողմերը: Այսպես, զեղեցկության զաղափարը Թումանյանին զբաղել է «Ձկնուրս Ուրախմայի մասին» հեկիարում, դժվարությունների և նեղությունների հանդեպ մշտապես կայուն Թումանյանը սիրել է աշխատավոր Հասանին, զբեղով «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ» հեկիարը, մտորումներ հալածված ժողովրդի մասին նրա ուշադրությունը բևեռել են հնդկական «Աստղերից իջած կինը» ավանդության վրա: Թումանյանին այնքան բնորոշ՝ լավատեսությունը, հավատը ապագայի նանդեպ, իր արտացոլումն է գտել «Ոսկե ֆաղափում»:

Դեռ հին ժամանակներից ժողովուրդները փայփայել են ազատության, երջանիկ կյանքի հույսը, երազել են ապրել առանց վշտի, առանց կարիքի: Նրանք ստեղծել են հեկիարներ ու լեզնեղներ երջանկության աշխարհի, «ոսկե ֆաղափ», ավետաց երկրի մասին, այն ժամանակների մասին, երբ յուրաքանչյուրը կկարողանա վայելել իր աշխատանքի արդյունքները: Այս առթիվ Դորկին զբեղ է, «Ֆանտազիայի յուրաքանչյուր բոխիչի ներքո հեշտությամբ կարելի է բազանայտել նրա հաբուցիչին, իսկ այդ հաբուցիչը՝ մարդկային աշխատանքն՝ ավելի հեշտացնելու մշտական ձգտումն է»:

Երջանիկ կյանքի, աշխատանքի, հավասարության, արդարության մասին հեկիարներ ունենալուր ժողովուրդները՝ յուրաքանչյուրը միայն իրեն հասուկ ռոճով ու զբեկակերպով: Այսպես, օրինակ, դազախական ժողովուրդը երջանիկ երկրի մասին իր երազանքն արտացոլել է «Как Асан-Кайгы искал Жер-Уюкк» ժողովրդական հեկիարում: Հասանը որոնում է ավետաց երկիրը, նա լսել է, որ կա այնպիսի մի երկիր, ուր ժողովուրդը ապրում է չիմանալով ինչ է վիշտն ու կարիքը, ճնշումն ու աղբատությունը: «Հասան-Կայգին երազում էր իր ժողովրդին բնակեցնել այդպիսի մի երկրում: Բայց որտեղ էլ որ նա լինում էր, ամենուրեք տեսնում էր աղբատություն և ճնշում»: Հեկիարն ավարտվում է տխուր վերջաբանով: «Հասան-Կայգին այսպես էլ չգտավ երջանիկ երկիր»՝ Ժեր-ույուկը»:

Մարդկային ճակատագրի անհավասարության յուրատեսակ արտապատկերումներն են հանդիսանում Թումանյանի «Ուտուպիան» և Կամպանելլայի «Արևի ֆաղափը»: «Արևի ֆաղափում» չկա ճնշում, չկան «անբան անպետներ ու ձրիակերներ», քաղաքն աշխատում են ստանալով քսա իրենց պահանջմունքի:

Ողբիայական շարիքի վերացման այդ պատումները ավելի տեսանելի կերպով իրենց արտացոլումն են գտել Ձերեխեսկու ստեղծագործության մեջ:

Երջանիկ երկրի որոնման մի հետաբերական արձագանքը հանդիսացավ Ավ. Խահակյանի «Ոսկե ֆաղափը»: Հիանալի կարգեր է հաստատում իր երկրում արեալագներ, որին դաստիարակել են աստվածները, նրանց երկրում չկան զուրկ ու գեղ, առևտրականներ ու փող, նախան ու ատելություն, «որովհետև քաղաքում կառավարում էր երկիրը աստծու ճանապարհով»: Այդ այդ ֆաղափում եղած ամեն ո՛ր նրան կոչում էր «Ոսկե»: Բայց դարեր անցան և մարդիկ կորցրեցին այդ ֆաղափի ճանապարհը: «...Եվ հիմա ոչ ո՛ր չգիտե, րե ինչ ճանապարհներով պիտի գնալ գտնելու երջանիկ, ոսկե ֆաղափը»:

Այսպես հոռետեսորեն է ավարտում իր հեկիարը նաև Խահակյանը:

Ոսկե ֆաղափ է որոնել նաև հնդիկ ժողովուրդը, երջանիկ կյանքի մասին իր երազանքները նա ներգրել է հին հնդկական «Ոսկե ֆաղափ» հեկիարում: Բայց չգիտես ինչու, շնայած իր լա-

1. М. Горький, О литературе, Москва, 1935, стр. 367.

2. Казахские народные сказки, М., Госиздат, 1952.

3. «Республика» (Ташкент), 1913, № 1, էջ 7:

վատևորյանը, այդ հեֆիարը -ի գետնղվել վերջին ֆանամյակի ընթացքում նրատարակված հնդկական հեֆիարների ոչ մի ժողովածուի մեջ:

Հատկանշական է, որ հենց այդ հեֆիարն էլ գրավել է Թումանյանի ուշադրությունը, որովհետև դա ինչ որ շափով իր մեջ պարունակում է Թումանյանի կենսափիլիսոփայության սարերը, նրա երազները երջանիկ կյանքի մասին, այն մասին, որ մարդը պետք է լինի ազատ, որ սա պետք է վայելի իր աշխատանքի արդյունքները: Այսինքն, էրե արտաճայովելու լինենք այժմևական տերմիններով,— անց է կացնում կոլեկտիվի գաղափարը, ավելի լայն վերցրած՝ խաղաղ աշխատանքի մարդկանց, երջանկության՝ սոցիալիզմի գաղափարը:

Ի նկատի ունենալով, որ Թումանյանը հեֆիարի վերհագրի տակ նշել է «Հնդկական հեֆիար», մենք այն պետք է համարենք բարգամանություն:

Պետտի անձնական գրադարանն ուսումնասիրելիս գտնվեց մի ժողովածու, որն ուներ «СТО СКАЗОК РАЗНЫХ СТРАН И НАРОДОВ» խորագիրը: Ժողովածուի վերջին էջի վրա, Թումանյանի ձեռնով գրված են չորս հեֆիարի, այդ բովում նաև «մսկի ֆաղաբ»-ի խորագրերը: Այդ հեֆիարի սուսերեն բարգամանությունն ունի «հնդկական» ենթավերնագիրը: Հավանաբար այն բարգամանվել է անգլերենից կամ գերմաներենից, իսկ ժողովածուն կազմող Ա. Նեելվան միայն վերաբարդել է հեֆիարը, ցանկում, որպես հեղինակ, նշելով Յու. Գունգերենին:

Նեելվայի և Թումանյանի բարգամանությունների մանրակրկիտ համեմատությունը ցույց տվեց, որ Թումանյանի հեֆիարը ոչ թե հախորդի սոսկ բարգամանությունն է, այլ յուրատեսակ փոխադրությունը, որը բացառիկ տեղ է գրավում Թումանյանի բարգամանական ստեղծագործությունների շարքում, և մի նոր կողմից էլ լույս սփռում նրա աշխարհայացքի և կենսափիլիսոփայության վրա:

Նեելվայի տեքստից Թումանյանը վերցրել է հեֆիարի սոսկ գաղափարը և միանգամայն ինֆեռուայն կերպով է լուծել աշխատանքի և մարդու երջանկության պրոբլեմը:

Թումանյանը ստեղծագործական մեծ աշխատանք է կատարել հեֆիարի վրա, այդ վկայում է սյուժեի, լեզվի և ոճի ուսումնասիրությունը, ինչպես և իր բարգամանության տարբեր հասարակությունների համեմատությունը: «մսկի ֆաղաբ» հեֆիարի երկրորդ՝ 1911 թ. վերահրատարակության ժամանակ (առաջին հրատարակությունը տեղի է ունեցել 1909 թ.), նա կատարել է մի շարք փոփոխություններ ոճի և լեզվի մեջ: Օրինակ, սկի ֆաղաբի երգը լսելով՝ «Երջանիկ մարդիկ.— մտածում է Գիվանան, ու երբ երգը լսում է, դիմում է նրանց»: Թումանյանը հանել է «Երբ երգը լսում է»,— բառերը, որովհետև հետո բերվում է բուն երգը և հասկանալի է, որ Գիվանան լսում է այն: Վերջին էջերում կատարված է լրացում, նշում, օրինակ «...քե աշխարհը նեղ է, հիմա երգում էր»: Թումանյանն ավելացրել է. «ու ցավով լիք» և «ամեն տեղ»: Հեֆիարի լեզուն առավել աշխույժ և կենդանի դարձնելու նպատակով, Թումանյանը բայերի անցյալ ժամանակը փոխել է ոչ պատմական ներկայով, «Յվ էր ինքը, ինչ էր...»— «քե ով է ինքը, ինչ է...»— և ապա «Նղել էր»— «եղած կլինի...»: «հնչում էր»— «հնչում է...»: Իսկ որպեսզի ավելի ժողովրդայնություն հաղորդի երջանիկ ֆաղաբի աշխատավորների երգին, նա «աշխ ինչ լայն է» արտահայտությունը փոխել է «աշխ ինչ լեն է» ձևով և այլն:

Թումանյանին շեն գոհացրել նեելվայի գրքում գետնղված հեֆիարի նկարները, որոնք գեղարվեստական արժանիքներով առանձնապես աչքի չէին ընկնում, խիստ վերացական էին և չէին համապատասխանում հեֆիարի սյուժեին: Այդ իսկ պատճառով հեֆիարի երկրորդ հրատարակությունը նախապատրաստելիս, Թումանյանն ինքն էլ լիտերել և հատկապես պատվիրել հնդկ ժողովրդի ոգուն ու Հնդկաստանի կոլորիտին համապատասխան նկարներ⁴:

«մսկի ֆաղաբ» հեֆիարում Թումանյանը պաշտպանում է յուրաքանչյուր մարդու երջանկության իրավունքը.

«Երջանկությունն ամեն մարդու.

խաղաղությունն ողջ աշխարհին»:

Այս սողերն արտացոլում են Թումանյանի և նրա հեֆիարի դրական կերպարի իդեալը:

Հնդկանկը պատկերում է իսկական երջանկության երկիր, ուր չկան ոչ ճորտեր, ոչ տե-

⁴ Պահպանվել է «մսկի ֆաղաբը» հեֆիարի կլիշեների պատրաստման դրամական փաստաթուղթը, ուր նշված է, որ Թումանյանը նկարները (բացի երկուսից) ընտրել է «Կուլտուրայի պատմություն» գրքից (6 և 7 հատորներ): «Կերոհիշյալ երկուսը, ինչպես պարզվեց հետագայում, վերցված են Հելլովալդի «Կուլտուրայի պատմությունից» (1897 թ. Պետերբուրգ): Կլիշեները պատրաստվել են Ե. Մադերի ցինկոգրաֆիայում, Քիֆլիսում:

⁵ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, 1949, 224 էջ.

րև, որ մառդիկ վայելում են իրենց աշխատանքի պտուղը, աշխատում և ապրում են ճաշ ու համբերաշխ: Անկասկած է, որ այս հեֆիաքր թումանյանի ուտոպիական երազանքն էր, այնպիսի հասարակարգի որոնման դրսևորումը, որ մառդը ազատ լինե՛ր ամեն տեսակ շահագործումից: Թումանյանը գիտեր, որ ստեղծագործ աշխատանքը ապագա ճասարակության հիմքն է լինելու և հավատում էր մառդկության լուսավոր ապագային:

Քայց երև զազախական և Խահակյանի հեֆիաքրում այդ ֆաղաֆր կորել է և նրա քանա-
պարհն աննայտ է, ապա Թումանյանն իր «Ոսկի ֆաղաֆր» ավարտում է ավելի լավատեսորեն: Այն՝ կարելի է այդպիսի ֆաղաֆ ստեղծել և այդպիսի ֆաղաֆ կա, գոյություն ունի, այն ստեղծված է մառդկանց ձեռքով, որոնք հասկացել են, քե ինչ է երջանկությունը ու որն է կյանքի նպատակը:

Որպեսզի նմարավոր լինի նևտեկ նևելովայի և Թումանյանի վարիանտների նմանություններին ու տարբերություններին, համառոտակի շարադրենք նրանց բովանդակությունը:

Նայա և առաջ անհրաժեշտ է նշել, որ հեֆիաքրի՝ նևելովայի պատումը ունի որոշ արկածա-
խնդրական մոմենտներ և բավական խնդրված իրադրություններ, որոնք հսկայա խանգարում են հեֆիաքրի հիմնական գաղափարի բացահայտմանը: Այնինչ Թումանյանը պահպանելով ու զար-
գացնելով հանդերձ հեֆիաքրի հիմնական գաղափարը, շխախտելով նրա տրամաբանական զար-
գացումը, վճռականորեն մերժել է արկածախնդրական մոմենտները, բոլոր երկրորդական և ան-
կարևոր մանրամասնությունները, որոնք առկա են նևելովայի պատումի մեջ, և որոնք բարդաց-
նում ու մրազնում էին հիմնական գաղափարախոսությունը:

Նևելովան հեֆիաքրն օժտում է ռուս բանասացին ընդոռչ արտահայտություններով և օգտագործում է ռուսական ժողովրդական հեֆիաքրին ընդոռչ դարձվածքներ. «дородоѣ бѣткюшка», «гряжу и диву даюсь», «заснул орел богатырским сном» և այլն:

Մրանց կողմին հեֆիաքր ծանրաբեռնված է արևելյան կեղծ էկզոտիկայի տարրերով: Վերց-
նենք քեկուզ աստվածների անունները՝ կասկածելի տառադարձությամբ, երազում աստվածնե-
րից առաքված հայտնություններ, «կաստաների» բաժանված մառդիկ, վերջապես հունական
կամ այլ ծագում ունեցող բազմաթիվ անուններն ու տեղանունները՝ Դինայագոս, Փակոնդ և
Ուխտալ (կղզիներ), Վիտակապուրա (ֆաղաֆր), Ուտտարա (լեռ), գուշակ բաշուն Մադասխան
(այնինչ շնդկաստանում ընդունված է նակատագրի բաշուն շուման կամ շարուղան):

Թումանյանի հեֆիաքրը գրված է մի լեզվով, որը կարող է համընկնել յուրաքանչյուր ժո-
ղովրդի լեզվի նևտ, և սա հատկապես վերաբերում է ներուսների ուղղակի խոսքին: Շարադրանքի
ժողովրդայնությունն ու անմիջականությունն արտահայտված են այնպիսի դարձվածքներով,
ինչպիսիք են «դժար բան», «ոչով չի լսել», «գնում է գնում», «զուրկ փեշն է դնում» և այլն:

Երկու հեֆիաքրերում էլ գործողությունը տեղի է ունենում Բենարեսում, համընկնում են՝
բազավորի (Ուֆանա) և բազավորի աղջկա (Փանֆարա) անունները: Երկու հեֆիաքրերում
ընդհանուր Քանֆարայի նախագուշակ երազն է, բազավորի աղջիկը երազում տեսնում է ե-
րջանկության երկիրը, որը նա առաջարկում է գտնել իր ձեռքը խնդրող բոլոր երիտասարդներին:

Նևելովայի պատումի գլխավոր հերոսն է երիտասարդ բրամին Մակտիդեան («дева»
„deva“, „sanctus“, հավասարազոր է «աստվածային» բառին), իսկ Թումանյանի հեֆիաքրում
նրան կոչում են Դիվանա, այսինքն՝ նվիրված աստծուն (սանսկրիտերեն):

Մակայն այն պահից, երբ Մակտիդեան-Դիվանան ուղևորվում է «Ոսկի ֆաղաֆր» որոնելու՝
սկսվում են երկու հեֆիաքրի տարբերությունները:

Դիվանան գնում է «Ոսկի ֆաղաֆր» որոնելու. «զուրկ փեշն է դնում՝ գնում—որտե՞ղ ես,
Ոսկի ֆաղաֆ, բեզ եմ գալի».— բախիժով հարցնում է նա: Թումանյանը ասես վերաբողոքում
է բանասացի ձայնը, ստեղծում է հեֆիաքրային տրամադրություն: Դիվանան անտառում տես-
նում է վիրավոր արձվի, ցանկանում է նևտահարել նրան, բայց արձվը նրանից օգնություն է
խնդրում: Դիվանան արձվին բուժում է (Թումանյանն ընդգծում է հումանիզմի մոմենտը), և
երախտագետ արձվը իր քեռի վրա պատանուն ճասցնում է Ոսկի ֆաղաֆը: Ոչինչ ավելորդ չի
ասված, կարճ ու սեղմ տրված է Դիվանայի՝ Ոսկի ֆաղաֆում հայտնվելու պատմությունը:

Նևելովայի հեֆիաքրում, Մակտիդեայի հևտ տեղի են ունենում մի շարք ավելորդ արկած-
ներ, անտառում նա հանդիպում է ճգնավորին, որը նրան ուղարկում է իր եղբոր՝ Դինայագոսի
մատ՝ Ուտտարա լեռը: Սա էլ իր ներքին ուղարկում է Ուխտալյա կղզում բնակվող ձկնորսու-

6 Հևտաքրերական է, որ Հաղպատում Սուրբ Աստվածածնի Եկեղեցու մոտ գտնվող՝ 1211
թվականին շինված մատուռի վրա հանդիպում ենք «Ուրանա» անվանը, հնարավոր է, որ այդ
տուկ պատահականություն է, և ոչ թե ապացույց այն բանի, որ «Ուրանա» անունը հայկական է:

բան արեա Սատիվատրայի մոտ: Ճանապարհին Սակտիդերային կույ է տալիս մի ահագին ձուկ, որին պատահաբար որսում են և մատուցում Սատիվատրա արեալին: Սբ. ձկան փոքր պատում են, ավանդից ողջ և առողջ դուրս է գալիս Սակտիդերան: Այնուհետև նա և Սատիվատրա բազմաթիվ զենքերով են ինչ-որ մի շահոնդ կղզի՝ երկրպագելու Վիշնու աստծուն: Ճանապարհին փոքրիկ է սկսվում և Սակտիդերան, կառչելով օվկիանոսում աճող մանտարգենուց, փրկվում է: Երեկոյան այստեղ են հավաքվում արժիվները և նրանցից մեկը պատմում է, որ գալիս է Ոսկի Բաղափից և պատրաստվում է նորից բռնել այնտեղ: Սակտիդերան գաղտագողի մտուհեյով նստում է նրա մեջքին և այդպիսով բնկնում է Ոսկի Բաղափը:

Շատ էություն, այս բոլոր խառնաշփոթ արկածներն ու պատահարները, բերեցողի ուշադրությունը ցրելուց բացի, նրան ոչինչ չեն տալիս:

Ապա գալիս է ամենահիմնական մասը, ի՞նչ տեսավ Սակտիդերա-Ֆիվանան այդ նրաչալ: Երկրում (այսինքն՝ այն հիմնականը, որի համար Թումանյանը, ինչպես կարելի է ենթադրել, բնութել է հատկապես այս հեկիարը): Ահա քն երիտասարդին ինչպես է պատկերվում Ոսկի Բաղափը: «Видит Сактидера—стоит город на берегу моря, город, красивый такой, а кругом рощи, сады... дома, башни, стены городские не из золота, а самые обыкновенные»:

Իսկ ահա քն Թումանյանն ինչպես է նկարագրում Ոսկի Բաղափը, «Չորս կողմը բարեկից այգիներ, զմբուխ կանաչ, հազարագույն ծաղիկներ, օդը լին է և բարմուրջունով ու բուրմունքով, բոշոնների ծվյոցով ու ջրերի կարկաչով»: Եվ որ ամենից կարեւորն է, այդինքնում տաճարավոր է՝ աշխատավորների Եզրը, որն ավելացրել է ինքր՝ Թումանյանը:

Ա՛խ, ի՞նչ լին է աշխարհն ազատ
Էս կյանքի համար, ամենքի համար,
Ի՞նչխան լին է, ինչխան առատ
Էս կյանքի համար, ամենքի համար:

Ա՛խ ի՞նչ լավն է աշխատանքը,
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ անուշ է հոսում կյանքը
Լին սիրով, ծաղկով, երգով:

Ամբողջ բանաստեղծությունը կառուցված է հակադրությունների վրա: Աշխարհը նեղ ու փոքր չէ, այլ լայն է, բարեկից, և նրա բարիքներն ոչ քն հազվագյուտ բնությունների, այլ բոլոր մարդկանց համար են, և ոչ քն այնտեղ, ինչ-որ մի վերացական աշխարհում, այլ այստեղ, իրական կյանքում:

Թումանյանը փառաբանում է մարդու ազատ աշխատանքը, փառաբանում է երգով, սիրով, գովաբանում ծաղիկ-ծաղկունեով ի խաղաղ կյանքը: Եվ մարդկային երջանկության ու ազատ աշխատանքի մասին իր այդ պատկերացումները Թումանյանը բացահայտում է անմիջականորեն, հերոսների սրտակի խոսքի միջոցով:

Նեկրվան բոլոր իրադարձությունները վերատարում է հեղինակային խոսքի միջոցով. «Хочит Сактидера и дивуется: нет ни нищих, ни праздных людей, все трудятся по мере сил и как братья любовно относятся к друг другу. Ни зависти, ни ссор; куда ни взглянешь — всюду счастливые довольные лица», Եվ Սակտիդերան Եզրակացնում է, «Теперь я вижу — истинное счастье состоит не в богатстве и роскоши, а в труде и добродетели»:

Ահա այն բոլորը, ինչ բացահայտում է նեկրվայի հեկիարի հիմնական գաղափարը:

Թումանյանը միանգամայն այլ ձևով է բացահայտում հեկիարի հիմնական բովանդակությունը: Երջանկությունը նախ և առաջ՝ մարդկանց հավասարության մեջ է, որովհետև սուրկությունը հակընդդեմ է մարդու անհատականությանը, մարդկային բանականությանը: Գիվանա՞ն հարցնում է աշխատավորներին «...Կու՞մ ծառանե՛ր եք, որ բանում եք ձեռ տե՛րերի այգիներում...»:

— Ընե՛ք տե՛ր ու ձուռա չրպիտենե՛ք: — պատասխանում են նրան Ոսկի Բաղափի մարդիկ: Այսպես ուտեն, նրանք ձեռք են բերել ազատություն և հավասարություն, այսինքն այն, ինչ դառնում էր ազգի և մարդիկ: Բայց այս բոլորից բացի, յուրահանձնուր մարդ կյանքում պետ է նպատակ ունենա, մեծ նպատակ, որի իրագործմանն էլ պետ է ձգտի, պետ է տոգորվի ավելի չավր զտե՛նարու ցանկությանը, այսպես կյանքը կդառնա դատարկ, անբովանդակ և հետևաբար՝ անպետ: Չէ՛ որ կյանքը—անվերջ ձգտումն է ցանկալի նպատակին հասնելու համար:

կյանքն առանց որևէ նվիրական նպատակի ծառայելու՝ իմաստ չունի—այդպես է պատկերացրել կյանքը հուրագատ ժողովրդին ծառայելու գործին նվիրված Քումանյանը: «Միշտ լավ է, երբ մտքդիկ բողոնում են իրենց վատ սովորություններն ու կեները, լցվում են բարձր կարոտով ու ձգտում են, զենում են հասնելու մի բարձր նպատակի ... որովհետև կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձգտումն ու նանապարհը»⁷ (288 էջ):

Նեկլովայի հեփարում ուշադրությունը առավելապես կենտրոնացված է հետափրաշարմ պատմելու վրա, որը դարձել է ինքնանպատակ: Քումանյանի հեփարում Ոսկի ֆաղափի որոնումը, հանդիպումը քաղուհի Գոհարի հետ և այլն, սոսկ ֆոն են հեփարի հիմնական գաղափարը բացահայտելու համար: Ինչու՞մն է մարդու երջանկությունը: Սկզբում Դիվանան կարծում էր, որ մարդիկ այն պատճառով են երջանիկ, որ այդ ֆաղափում շատ ոսկի կա: Բայց երջանկությունն ամենևին էլ հարստության մեջ չէ,— ասում է Քումանյանը Գոհար քաղուհու բերանով: «Ոսկին մետաղ է, որ հողից է դուրս գալիս, երջանկությունը զգացմունք է, որ սրտի՛ց է լինում»:

Քառկեցությունն ու խաղաղությունը այդ հիաստանչ երկրում ամենևին էլ չի պահպանվում ռազմական սեռով. «Ես կարծում էի՝ անուշիլի բանակ՝ ունեմ և զենքի ուժով եմ պահպանում ձեր երկրի սխանչելի կարգն ու խաղաղությունը»— խոստովանում է Դիվանան: Բայց Գոհար քաղուհին բացատրում է, որ՝ «Ահն ու սպառնալիք և խաղաղությունն իրար չեն տեսել և միասին չեն ապրում»:

Այսպես, ուրեմն՝ խաղաղությունն ու անը միատեղ չեն լինում, երանք բացառում են իրար...

Գոհարը ժխտում է նաև Դիվանայի մի այլ սխալ պատկերացումը, քե իբր երա երկրի մարդիկ գիշեր-ցերեկ աղոթում են աստծուն, որպեսզի վերջինս ողորմած լինի իրենց հանդեպ: Նա բացատրում է Դիվանային, որ իր մարդիկ աստվածայինը պաշտում են բնության մեջ և չեն հանաչում միջնորդներ իրենց և երա միջև. «...Մենք բնության ընդարձակության մեջ ենք պաշտում երան և միջնորդներ չենք հանաչում մեր հոգու ու երա մեջ»:

Այն բանից հետո, երբ Սակտիդերան լինում է Ոսկի ֆաղափում և քաղուհին իմանում է, որ իր դուստրը Քանհարուն կենդանի է, հեփարի հերոսը վերադառնում է Քենարես: Եվ այստեղից էլ ձայր են առնում Սակտիդերայի նոր արկածները: Նա ընկնում է Հակոնդ կղզին, ուր երան Սաաիվաբայի որդիները բռնում են կապտում, և սպառնում սպանել, եթե չասի, քե նավարկությունից հետո ուր անհետացավ իրենց հայրը: Սակտիդերային ազատում է Սաաիվաբա քաղափոռի աղջկա կերպարանքն առած Դոգրան: Վերջապես, մի շարք արկածներից հետո Նեկլովայի հերոսը հասնում է տուն:

Քումանյանի հեփարում Դիվանային տանող նավը խորտակվում է, և նա ընկնում է հրաշխների կղզին, որի քաղուհին երան առաջարկում է իր սիրտն ու ձեռքը: Դիվանան հրաժարվում է: Պարզվում է, որ Գոհարը, կամենալով փորձել Դիվանայի նվիրվածությունը, ընդունել է հրաշխների կղզու քաղուհու կերպարանքը: Գոհարի հրամանով՝ արժիքը Դիվանային տանում է հայրենի ֆաղափը: Նրա հետևից ճնշում է երգն այն մասին, որ հերոսը վերափոխված և վերածնված վերադառնում է տուն («...Դեռում է նա վերածնված...»), ուր ծովաչափ վրտեր ու նոգսեր կան («ցավերի տուն, արցունքի ծով»): Քումանյանը խորապես հավատացած է, որ աշխարհում պետք է քաղափոռի իրադարձությունը, որ այնտեղ սմեն մարդ պետք է երջանիկ լինի: Իրա համար էլ նա գրում է, որ հերոսն իր հետ բերում է «երջանկությունն ամեն մարդու, խաղաղությունն ողջ աշխարհին»:

Եվ վերջապես, հեփարի վերջին մասը նվիրված է հերոսի վերադարձին՝ դեպի տուն: Նեկլովայի տարբերակում՝ Քանհարան երազ է տեսնում. երան երևում են աստվածները և հայտնում, որ նա Ուֆանայի աղջիկը չէ, որ երան գաղտնաբար արքայի պալատում գտել և փախցրել է «գիշերային դեր»: Այդ պահին էլ հայտնվում է Դոգրա քաղուհին. նա է Ուֆանա քաղափոռի համար հարսնախոսում Սաաիվաբայի աղջկա համար, իսկ Քանհարան և Սակտիդերան զենում են Ոսկի ֆաղափը կառավարելու համար:

«Вставая и ложась, благодарил он богов, что привели его в Золотой город и научили его познавать истинное счастье, которое заключается в труде и безкорыстной любви к ближнему»⁸.

Այսպես է Նեկլովան սվարտում հեփարը:

Բայց Քումանյանի համար կարևորը ոչ քե հեփարի երջանիկ ավարտն է, այլ այն, որ հերոսը հասկացել է կյանքի իմաստը, հասկացել, քե ինչու՞մն է, կայանում մարդկային երջանկու-

7 Չ. Քումանյան, *կրկերի ժողովածու*, Ն. Յ. կրկան, 1949, էջ 224—234:

8 «Сго сказок разных стран и народов», состав. А. Неелова, СПб, стр. 140.

թյունը: Գիվանան վերադառնալով պատմում է Քանառային. «Ես այժմ գիտեմ, ինչ բան է Սևիի ֆաղափը, ինչ է ոսկին և ինչ է երջանկությունը, ևս այժմ գիտեմ երջանկության զաղտնիքը»:

Քումանյանին չի բավարարել այն, որ Գիվանան մնում է կառավարելու մի ֆաղափում, ուր ամեն ինչ արդեն բարեհաջող է: Պետք է միշտ շտապել այնտեղ, ուր շարունակի ծով» կա, սգնել մարդկանց, քեթեցնել նրանց ծանր վիճակը, — այսպես էր անա հասկանում կյանքը Քումանյանը: Այդ իսկ պատճառով էլ նա Գիվանային ոչ թե բողոքում է բարեկեցիկ երկրում, այլ վերադարձնում է հայրենի Քենարես ֆաղափը, որպեսզի նա այնտեղ էլ մտցնի նոր կարգեր, ղեկավարի այնպես, ինչպես տեսել էր հիաստանջ Սևիի ֆաղափում:

Եվ ներջաման ու շահագործման ներքո տեմպայով ժողովուրդը դառնում է ուրախ ու երջանիկ. «Սևիի շկար նրա երկրում, բայց մարդիկ ապրում էին արդար աշխատանքով, զոհ ու երջանիկ իրենց ունեցածով»: Ժողովրդին երջանիկ տեսնել, — անա Քումանյանի երազանքը:

Երբ նկեղավայրի տարրերակում շեշտը բացահայտուրեն դրվում է աստվածային էության վրա, ապա Քումանյանի հեփիաթում կրոնա-բարոյախոսության հետևն անգամ չկա: Աստվածները չէ, որ Գիվանային սովորեցնում են ճանաչել իսկական երջանկությունը: Աստվածներին չէ Քումանյանը հիմն երզում, այլ աշխատանքին, ազատ ու երջանիկ մարդկանց խնդալից աշխատանքին: Գրանով էլ նա ավարտում է իր հեփիաթը:

Կարող ենք ասել, որ անչափ լուսավոր ու կենսահաստատ իր այս հեփիաթում Քումանյանն անդրադարձել է կենսականորեն կարևոր պրոբլեմների և յուրովի լուծել դրանք: Նա ստեղծել է լուրատեսակ հեփիաթ-ուսուպիա, ասես կանխագալով, որ մի ֆանի տարի հետո իր երազանքը փոխակերպվելու է իրականության:

Հնդկական հեփիաթներից Քումանյանը քարգմանել է նաև Կենեղիի հնդկական հեփիաթների ժողովածուում գետեղված և Յագիկովայի պատմած «Աստղերից իջած կիներ» հեփիաթը⁹: Քումանյանի երկերի լիակատար ժողովածուում «Աստղերից իջած կիներ» ծանոթագրված է որպես հնդկական հեփիաթ և ոչ մի հիշատակություն չկա այն մասին, որ դա Ամերիկայի հնդիկների կամ, ինչպես այլ կերպ նրանց կոչում են՝ «կարմրամորթների» կյանքից է: Ինչն է գրավել Քումանյանի ուշադրությունը ամերիկյան հնդիկների կյանքին վերաբերող այս հեփիաթում: Լիակատար հավանականությամբ կարող ենք պնդել, որ հումանիստ բանաստեղծին գրավել է այդ ժողովրդի կյանքն ու ճակատագիրը, որովհետև նրա ռոմանտիզմը համանման էր սուրբանական արյունոտ լծի տակ տառապող, հայրենի բնօրրանից տարագրվող իր ժողովրդի ճակատագրին: «Աստղերից իջած կիներ» հեփիաթը բնթերցողին գրավում է իր պարզությամբ, հնդիկ ժողովրդի կենցաղի, սովորույթների ու հավատալիքների պատկերավոր վերաբերությունը:

Քումանյանին գրավել են ժողովրդական ավանդություններն ու ասույթներն իրենց հույակապ պարզությամբ ու անմիջականությամբ: Հեփիաթը վերակենդանացնում է կուսական տափաստանների գեղեցկությունը, վերաստեղծում է նախնադարյան մարդկանց աշխարհայացքը, նրանց ամբողջական բնավորությունները: Մեծ սիրով են պատկերված Քարձը փետրավորը, նրա մայրը, Աստղից իջած աղջիկը:

Հինավուրց քափառական սյուժեն այն մասին, որ աղավաղների կամ կարապների կերպարանով երկրի վրա են իջնում կախարդական աղջիկներ, որոնք, մի կողմ նետելով իրենց փետուրներն, սկսում են պարել, և այն երիտասարդի մասին, որ հետամտելով, նրանցից մեկին կին է առնում՝ իր արտոցությունն է գտել շատ հեփիաթներում («Կեղեցկուհի Կասիլիսան», «Սագի կաշին», «Արեգնագան», «Աստղերից իջած կիներ» և այլն):

Ֆանտաստիկական հնարանների միջոցով այս հեփիաթը արտացոլում է հնդիկների կողմից յուրանատուկ պատկերավորությամբ բնկավող ունայ կյանքը: Եվ այս տեսանկյունից գիտելով, հեփիաթը որոշակի արժեք է ներկայացնում: Մենք տեղեկանում ենք, որ հնդիկները սիրել են վառ և երփներանգ հագնվել, զարդարվել փետուրներով ու ճուլուններով, նկարագրող իրենց երեսը, որ նրանք եղել են ֆալախի, ճարպիկ և խիզախ նետաձիգներ:

Քումանյանը մեծ շեղումությամբ է հայրնթերցողին մատուցել հեռավոր այդ ժողովրդի կյանքի պատմության մի ֆանի, բեկուղ և հեփիաթային էջերը: Նա հիմնականում պահպանել է հեփիաթի հյուսվածքը և միայն որոշ ղեպներում, մերք հեռացել է տեխստից, մերք էլ կատարել աննշան հավելումներ, էր, նպատակահարմար է գտել: Հետևելով ուսական քարգմանությունը,

⁹ Г. Кеннеди, Индейские сказки, СПб, стр. 227—242.

Քումանյանը ակամայից երկու-երեք տեղ հեռացել է հնդկական հեքիաթի ոգուց: Օրինակ. ես գրում է «հավիտ», «գոմեշ», «վրան», «կոշիկ», այն դեպքում, երբ կոլորիտի պաշտպանության տեսակետից, ավելի նիշտ կլինե՞ր կիրանկ «պրեհեներ», «րիգոններ», «վիզվամ», «մոկասին»: Հավանաբար այդ արվել է փոխհասակ ընթերցողներին ավելի մատչելի լինելու համար: Ահմեդաբադ է նշել, որ ուսական թարգմանության մեջ մասնակիորեն հիշատակվում է պրեհեների և վիզվամների մասին:

Քումանյանը մի շարք նախադասություններ է հանել, որոնք ոչ մի դեր չեն կատարում հեքիաթի սյուժեի զարգացման մեջ, փոխել է վերջավորությունը, հանելով վերջին ինը նախադասություններ: «Предание говорит, что после смерти Высокое Перо ушел в Блаженные охотничьи земли; наверное и жена его последовала туда за ним, так как они с тех пор никогда не разлучались»¹⁰.

Այսպիսի վերջավորությունը միանգամայն ունիտարական պատմություններ տալիս է, որոշ միասնական երանգավորում: Քումանյանը չուղղի է ավարտում հեքիաթը, տալով նրան լայնատեսակ իմաստ. «եվ էն նոխ հովտում, կովի գետի ափին իրենց խաղաղ վրանում, անբաժան ու երջանիկ, իրար հետ ապրում էին շահել որսկանն ու աստղերից իջած կիներ»:

Հետևելով շարադրանքի հենքին, Քումանյանը մերթ առանձին բառեր, մերթ կարճառոտ նախադասություններ է ավելացնում, նպատակ ունենալով պատմվածքը հայ փոքրիկ ընթերցողի համար ավելի պարզ ու հետաքրքիր դարձնել: Պատմելով, որ Աստղ-աղջկա խնդրանքով նրա հայրը գամրուղն իջեցնում է կախարհական շրջանի մեջ, Յազիկովան շարունակում է. «Высокое Перо пришёл к озеру и увидел лебедей». Իսկ Քումանյանն ավելացնում է հեքիաթին խիստ բնորոշ մի նախադասություն՝ «Բայց ի՞նչ եղավ Բարձր փետրավորը»: Իսկ հեքիաթի մեջ որոշ խորհրդավորություն է մտցնում:

Թարգմանության ընթացքում Քումանյանը ուղղել է տեքստի մեջ եղած որոշ աննշտություններ, օրինակ՝ Յազիկովայի տեքստում աղբիկներն սկսում են պարել «наигривая пальцами на маленьких барабанах из орлиной кожи...» — «արծվի կաշվի» փոխարեն Քումանյանն օգտագործել է ավելի պատկերավոր՝ «օձի կաշի» արտահայտությունը՝ կամ՝ «На ближнем озере сидит большое стадо диких лебедей». Ենտուն է ի փոխարեն նիշտ կլինե՞ր ասել «վայր է իջնում», և ոչ թե «հոտ» այլ՝ «երամ»: Քումանյանն այդպես էլ անում է գրելով «...լճի վրա վեր է եկել վայրի կարպիների երամ»:

Երբ հայրը Աստղերից իջած աղջկան երկար ժամանակ համոզում է մնալ իր հետ և բողբոկ ամուսնուն, նա պատասխանում է. «Высокое перо—хороший человек и очень ко мне добр, и я ни за что не покину его...» Իսկ Քումանյանը շարունակում է. «Բայց Բարձր փետրավորը լավ մարդ է ու ինձ շատ է սիրում...»: Որքան կենդանի են և մարդկային երկրավոր ամուսնու հետ կապված Աստղ-աղջկա այս խոսքերը:

Քումանյանը ռժր հղկել է դուրս բողբոկով ավելորդ բառերն ու արտահայտությունները: Աստղերից իջած աղջիկը «...продолжала питаться ягодами и хлебными зернами, потому что не хотела никого убивать, кроме одного живого существа, впрочем, а именно, кроме маленькой желтенькой птички» — նախադասությունը զարմացնում է իր անհարթությամբ: Քումանյանն այն վերափոխել է այսպես. «Ապրում էր պտուղներով ու հացահատիկներով, որովհետև չէր սիրում սպանել, բացի մեկից, էն փոքրիկ, դեղին բոջմակից»:

Անցնելով ընդհանուր եզրակացությունների, անհրաժեշտ է նշել, որ Քումանյանը, պահպանելով հեքիաթի պատմական շարադրանքը, այն դարձրել է ավելի բնական և հետաքրքիր: Հեքիաթում չկա ակնարկ այն մասին, որ սպիտակների դալուց հետո հնդիկների կլանքը վատացավ. ասված է միայն, որ ոչնչացվեցին «գոմեշները»: Ոչ մի հիշատակություն չկա կարմրամորթների ոչնչացման կամ նրանց համար սահմանված նոր բնակավայրի մասին, սպիտակներից ստացած հիվանդությունների հետևանքով տեղի ունեցող մահացությունների մասին և հարբեցողության մասին, որին սպիտակները գիտակցաբար վարժեցնում էին կարմրամորթներին: Փոքրիկ ընթերցողի մոտ պետք է որ խոր տպավորություն ստեղծվե՞ր քաջ ու նարպիկ ռուսոզի ու նրա բարի մոր, և աստղերից իջած, սիրող ու նավատարիմ, ամուսնու վիզվամում անցկացրած երկրային ազդատիկ կլանքը նոր երկնային պալատում իշխող ամհոզ ու ռեդ կյանքից գերադասող կենոշ մասին: Այսպես է Քումանյանը փոխհասակ հայ ընթերցողներին ծանոթացրել մյուս ժողովուրդների հեքիաթների, նրանց երկրի և բնության, կենցաղի ու սովորույթների հետ:

¹⁰ Նույն տեղում, էջ 242:

Առեկյան հեքիաթներն իրենց արտակարգ գունազեղ երևակայությամբ, սրամիտ և ուրախ սյուժեներով միտ է հրապուրել ևն Քուժմանյանին: Ուրախ կոչկակարի սյուժեով գրված հեքիաթները կենցաղային ևն և հիմնականում հանցիլիում են առեկյան ժողովուրդների մաս՝ գրելի միանման զարգացում ունեցող սյուժեով: Այդ հեքիաթները ցույց են տալիս աշխատավոր ժողովրդի իսկական զավակին, որը ճարտիկ ու աշխարհաց է, երբևէ չի կորցնում իր կենսուրախությունը, կայտառությունը:

Նա իր աշխատասիրության և շահասիրության շնորհիվ միշտ էլ էլ և գտնում դժվարին դրությունից: Արգելում են կաշկալաւությունը, նա սկսում է ջուր կրել, այդ էլ արգելում են, դառնում է բեռնակիր, գրկում են հաց աշխատելու այդ հնարավորությունից էլ՝ բրի շերտ է վահառում:

Տարբեր ժողովուրդների մոտ այս հեքիաթը տարբեր անվանումներ է ստացել: Պարսիկների մոտ այն կոչվում է «Ցարդան Կուլի բեկ» («Персидские сказки», Москва, 1958), վրացիներն այն անվանել են «Կոչկակարի մասին» («Кочкыкары масын», Сто сказок, 1954, Тбилиси), ադրբեջանական տարբերակը կոչվում է «Շահ Արասն ու Փարսաթը» («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 13, Тб. 1898): Այս հեքիաթն իր հետաքրքրական անդրադարձումն է գտել նաև ուսումական «Հնարագետ կոչկակարը» տարբերակում («Иван мекышан—разумом большой», М., 1959): Հեքիաթի սյուժեն նավանորեն ներմուծվել է Առեկից, որևէ առևտրական ճանապարհորդի կողմից: Ռուսական իրականության մեջ նա ստացել է այլ երանգավորում և իր վրա կրում է զբաղված վերամշակույթի հետևեր: Հեքիաթի մեջ անփոփոխ են մնացել միայն զինվորի հնարամտության և նրա երկար քրի՛ փայտի փոխարկվելու փաստերը: Այս կամ այն արհեստի՝ փուսաստանում արգելված լինելու մասին խոսք անգամ լինել էր կարող, նման բնությունները հնարավոր էին միայն առեկյան երկրներում: Հեքիաթում ուշադրվ է, որ ժողովուրդն այն հարմարեցրել է Պետրոս Առաջինի՝ միակ ժողովրդական թագավորի ժամանակներին, որը խալիֆ Հարուն ալ Ռաշիդի կամ Շահ Արբասի հման, չփվում էր ժողովրդի հետ, չբռնում էր ժողովրդի մեջ¹¹:

Այս հեքիաթի սյուժեն նախ վերամշակել է Վեր. Փափազյանը և վերնագրել՝ «Փայտե սուրբ»: Հեքիաթին անդրադարձել է նաև Հովհաննես Հովհաննիսյանը, չափածո վերաբանագրելով ուրախ կոչկակարի պատմությունը («Փինաշի»): Եվ վերջապես, այս հեքիաթի սյուժեն գրավել է նաև Հովհաննես Քուժմանյանի ուշադրությունը, որին նա տվել է «Քեֆ անողին քեֆ չի պակսի» բնույթը խորագիրը:

Վերահիշյալ տարբերակներից յուրաքանչյուրը, իրենց որոշ տարբերություններով հանդերձ, խիստ ինքնատիպ է: Բայց ավարտի բնդհանրությունը, այսինքն այն, որ կոչկակարը աստծու դիմելով խնդրում է փայտի վերածել իր քուրը, երբ այն մարդը, որին հրամայված է սպանել՝ մեղավոր չէ, — մատնանում է մի բնդհանուր սկզբնադրյուրի և հատկապես առեկյան սկզբնադրյուրի առկայությունը, որովհետև գործողությունները տեղի են ունենում Մաղղաղում կամ Ապահանում, Արաս կամ Հարուն ալ-Ռաշիդ թագավորների մասնակցությամբ:

Համեմայն դեպք: Ուսեղ, ո՛ր թագավորի ժամանակ էլ որ տեղի ունեցած լինի գործողությունը, հեքիաթը նպատակ ունի ցույց տալ աշխատավոր մարդու աշխարհացությունը, շնուսահատվելու, հոգևպես շրնկվելու, դժվար դրություններից դուրս գալու, ապրելու, ունեցածով բավաբար վելու նրա կարողությունը:

Այս հեքիաթն իր գաղափարախոսությամբ հարազատ էր Քուժմանյանին: Ըստ երևույթին նա կամենում էր իր ժողովրդին տեսնել այնպես, ինչպես կերտել է նա Հասանին՝ ուրախ, կայտառ, շնուսահատվող, հպարտ, հնարագետ, հմուտ, կենսասեր և լավատես:

Հեքիաթի՝ վերևում րվարկված տարբերակներից Քուժմանյանի գրադարանում կա միայն ադրբեջանականը: Բայց, ինչպես ադրբեջանական, այնպես էլ մյուս տարբերակների միջև չկա բնդհանուր ոչ մի բան, որ հիշեցնի Քուժմանյանի հեքիաթը, այդ պատճառով էլ մենք այն պետք է համարենք առեկյան որևէ մեզ անհայտ սկզբնադրյուրից կատարված փոխադրություն: Այդ մասին է վկայում նաև Քուժմանյանի հեքիաթի «Առեկյան գույց» ենթավերնագիրը¹²:

11 Թվարկված հեքիաթներից միայն վրացական տարբերակն է, որը նկատմամբ դժվար է ասել, թե ո՞ր երկրում են տեղի ունենում գործողությունները, և ընդհանրապես՝ ո՞ր ժողովրդին է պատկանում այդ հեքիաթը: Այդտեղ ավելի բան տկնայտ է ուսումական երանկը:

12 Ի դեպ, «Քեֆ անողին քեֆ չի պակսի» հեքիաթը Քուժմանյանի ակադեմիական «Տրատաբակություն մեջ համարվել է ինքնուրույն հեքիաթ և ծանոթագրվել է որպես զագախական Մինչդեռ հեքիաթն ադրբեջանական է, և գրի է տանված Ադրբեջանի Ղապախի գավառում, փոխադրություն է:

Հեֆիաթի վերամշակման ժամանակ, Թումանյանը փոխել է Շահ-Արասի անունը, դարձնելով Հարուն-Ալ-Ռաշիդ: Այս փոփոխության պատճառը միանգամայն հասկանալի է: Հեֆիաթում քաղավորն օժտված է բարեմասնություններով՝ արդարասիրությամբ, զբասիրությամբ, շարին պատժելու աներե վճռականությամբ և այլն: Այնինչ Շահ-Արասը սառստեցուցիչ էջեր է քողել մեր ժողովրդի պատմության մեջ, և նրա մասին է հենց Թումանյանը գրել իր հայտնի «Քաղաքում ու շառչին» լեզվեղբ. նրան ներկայացնելով որպես արեւախում դահին: Հետևաբար, Շահ-Արասը չէր կարող ճամապատասխանել արդարադատ օր զբասիրտ քաղավորի այն կերպարին, որը պատկերված է հեֆիաթում: Ուստի դա լիովին տրամաբանական, պատճառաբանված և արդարացի փոփոխություն է:

Թումանյանը «Ֆեֆ անողին Բեֆ չի պակսիլ» հեֆիաթում պահպանել է արարական կուրիտոր (Քաղաք, Հարուն ալ-Ռաշիդ, մունետիկ), և իրեն հատուկ նմայնով, բարի մեծիձողով պատմում է, քե ինչպես մի ժամանակ Քաղաքում քաղաքից Հարուն ալ-Ռաշիդ խալիֆը, նախակի քափառաշրջիկ ղերվիչի շոբե էր հագնում և շրջում քաղաքում, իմանալու քե ինչ է խոսում ժողովուրդը, և ինչ է կատարվում իր ներքում: Մի անգամ, անցնելով քաղաքի խուճերափողոցներից մեկով, նա էրգ ու Երաժշտություն է լսում մի աղբատ խրհիքից: Ներս մրտնելով, խալիֆը տեսնում է ճամեստ սեղանի առջև նստած տանտիրոջն ու երաժիշտներին, որոնք խմում են և ուրախանում:

Տանտերը ծպտված խալիֆին ընդունում է սիրալիր, և էրը վերջինս նետաբերվում է, քե ինչ միջոցներով է նա ապրում և Բեֆ անում, պատասխանում է, որ շնչին օրավառնը բաժանում է Երկու մասի, մի մասը սեվելու, իսկ մյուսը՝ ուրախության: Խալիֆը որոշում է փորձել, քե Հասանը օրհան նետնողական է իր կենսափիլիսոփայության մեջ: Հետևյալ օրը նա արգելում է կոշկակարի արհեստը: Հասանը դառնում է շրկիր: Խալիֆն այդ էլ է արգելում: Այն ժամանակ Հասանը դառնում է բեռնակիր և ի վերջո, էրը նրան նշանակում են քաղաքական պալատի գլխավոր պանակ, նա վաճառում է քրի պողպատե շերքը և պատյանի մեջ փայտյա քուր դնում: Վերջում, իր ամբողջ վեճությամբ ճանդես է գալիս Հասանի ազնվասիրտ բնավորությունն օր ննարամտելու նրա փայլուն ունակությունը: Երբ խալիֆն նրամայում է կտրել ճանցավորի գլուխը, նա դիմում է աստծուն, որպեսզի վերջինս իր պողպատե քուրը փայտի փոխի. էրը մանապարտը, որի գլուխը հրամայված էր կտրել, մեղավոր չէ: Հասանի ննարամտությունը հիացնում է խալիֆին, և նա ներում է մահապարտին, իսկ Հասանին դասում է իր մտերիմների շարքը:

Աշխատասեր ու ազնիվ Հասանը, այսպիսով ճանդես է գալիս ամենափոքր ննարավորություններից առավելագույն կերպով օգտվելու իր կարողությամբ: Նա Թումանյանի համար քանկ է ոչ միայն իր արտակարգ լավատեսության օր ողու կայունության ճամար, այլև նրանով, որ կարողանում է զնահատել էրգն օր Երաժշտությունը:

Թումանյանի փոխադրության մեջ մենք շենք տեսնում Բեֆ սիրող Հասանի կերպարը մրգեղնող և օչ մի բիծ: Հեֆիաթի մյուս տարբերակներում, էրը կոշկակարը փորձանքի է հանդիպում, միշտ չէ, որ ազնիվ ճանապարհով է ազատվում (մերը նա իրեն ներկայացնում է որպես գերեզմանոցի վարձակալ, մերը շահի ծառա և այլն): Թումանյանի հեֆիաթում նա ազնվորեն աշխատում է և ազնվորեն վաստակում իր կոպեկները: Անա քե ինչպես է պարզասիրտ Հասանը վերադարձում իր կենսափիլիսոփայությունը կարծեցյալ ղերվիչին, «Յրանի քե մարդու պակասը փողը լինի: Բանը մարդու սիրտն է»: Մի այլ ղեպում նա ասում է, «Ավելի լավ է ուրախանալ, քան քե տխրել» և ապա «Ավելի լավ է ուրախություն ունենալ, քան մարդ սպանելու սուր»¹³:

Խաղաղասեր ու աշխատավոր հայ ժողովրդի և իր՝ Թումանյանի հավատքն է այս, որը միաժամանակ արտահայտում է պոետի ողջ կենսափիլիսոփայությունը, որ բնորոշ է նրա ամբողջ ստեղծագործության ճամար: Անա ինչու ցարական կառավարության կողմից հրահրված հայ-աղբերջանական Եղբայրասպան պատերազմի ժամանակ, Թումանյանը գյուղեգյուղը բնկած կոշ էր անում սերեր պատյանները դնել, իրար վրա սուր շրարձրացնել, որովհետև լուսավոր ապագային կարելի է հասնել միայն բարեկամության և համերաշխության միջոցով: Հասանը էնֆ է անում ոչ քե նրա ճամար, որ շատ փող ունի և չգիտե, քե որտեղ ծախսի, այլ այն պատճառով, որ սիրում է կյանքը և հավատայած է, որ նույնիսկ աննշան վաստակով կարելի է ուրախ ապրել. «...Երբեք չի պակասիլ մի կտոր հաց օր մի անկյուն, որ էս էնտեղ ուրախանամ» — ասում է նա: Նա սիրում է ուրախանալ ոչ այն պատճառով, որ ծույլ է ու անբան: Ո՛չ: Նա

13 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, շ. 3, 1949, Երևան, էջ 179—183:

չափազանց աշխատասեր է: Նա տվյալ դեպքում արտահայտում է աշխատասեր և խաղաղասեր, ռազմադավոր և իմաստուն, կյանքի փորձություններին դիմացող մի ժողովրդի փիլիսոփայություն: Եվ լեռանաբար, այդպիսի հատկանիշներ ունեցող հերոսին նվիրված հեփաքը չէր կարող հարազատ չլինել կենսասեր և լավատես մեծ բանաստեղծին:

Քուժանյանն օգտագործում է խորապես ժողովրդական ոճեր ու դարձվածքներ: Նրա հեփաքի հերոսների խոսքը հագեցած է ֆոլկլորային տարրերով: Քացարձակապես անկարելի է գրականայնության և արհեստականության որևէ հետքի հանդիպել հեփաքի ոչ միայն նկարագրական մասում, այլև հերոսների ուղղակի խոսքում («Քո տունը շֆանդլի», «Քերանդ բարի բաց արա», «Անպակաս լինի եո ուրախությունը», «Աշխարհի բան է՝ ինչպես բոնես, Լնպես էլ կերբա» և այլն):

Չի կարելի համաձայնել այն գրաֆենադատների կարծիքների հետ, որոնք հեփաքում տեսնում են անհոգ ու անզարդ կյանքի գովեստ միայն: Իրականում հեփաքի իմաստն անհամեմատ խորն է: Խալիֆը Հասանին իր մեծավորը դարձնելով պատվիրում է, որ նա «միշտ աշխատի ու անպակաս ուրախ ապրի, ուրիշներին էլ սովորեցնի ուրախ ապրել աշխարհում...»: Քուժանյանական այսպիսի նշանակալի պատգամով էլ ավարտվում է հեփաքը՝ աշխատել և ուրախ ապրել, կույ չգնալ առօրյա ճղճիմ հարցերին, կարողանալ փոքրի մեջ էլ տեսնել ուրախության առիթ, վերցնել այն ամենը, ինչ տալիս է կյանքը՝ իր հաճույքներով ու փորձություններով հունդերո:

* * *

Քուժանյանի ուշադրությունը գրավել է նաև «Թանկադին ֆարը» հեփաքը, որը տեղ է գտել ռուսական կյանքից և կենցաղից վերցված վիպակների և պատմվածքների «Զարուն» խմբագրով ժողովածուում¹⁴: Դա ևս պատահական չէ: Այդ հեփաքում ժողովուրդը մարմնավորել է իր դարավոր Լեզանքները սրգարադատության ու գրասրտության մասին:

Քուժանյանը հիմնականում հետևել է հիշյալ ժողովածուն կազմող Չիսայակովի շարադրա՝ տարբերակին, և Լեքավերնագրում էլ նշել է՝ «Չիսայակովի պատմածից»¹⁵, Հեփաքը վերագրված է Հարուն ալ-Թաշիդի ժամանակներին, բազավոր, որն, բստ նրա մասին հյուսված լեզենդների, շուրեր փոխած շրջում էր ժողովրդի մեջ, ծանոթանում նրանց ցավերին ու կարիքներին:

Հեփաքում պատմվում է մի աղբատ մարդու մասին, որն իր կնոջ ու Լեխանների հետ Լեռանիկ կյանք էր վարում: Բայց նախանձոտ հաբեանը խլում է նրա կնոջը, իսկ Լեխաններին սթրկության տալիս: Այդ ժամանակից էլ Սաիդը դառնում է անտուն ու դժբախտ: Մի անգամ, Լեք խալիֆը պատերազմից վերադառնում էր հաղթանակած, ժողովուրդը նրան նվերներ է տալիս: Սաիդն էլ մի վիթխարի ֆար է նվիրում նրան և բացատրում, «...Քազավորին նվեր տվողը զենտ է իր սրտիցը տա... իմ սրտումն էլ էս ֆարն է ծանրացած, Լն էլ ևս Լմ ֆեզ նվիրում»¹⁶: Խալիֆը լսում է Սաիդի պատմությունը և հավաստիանալով նրա նշմարտացիությանը, պատժում է դատավորին, Սաիդին վերադարձնում նրա կնոջն ու Լեխաններին, իսկ ֆարը զարգարում է բանկադին ակներով և դատական գործեր ֆենելիս միշտ դնում իր առջև:

Ռուսական տեխստի Լեքավերնագրում նշված «Արևելյան հեփաք» արտահայտությունն ասում է այն մասին, որ հեփաքը փոխադրված է արևելյան սկզբնաղբյուրից: Այդ ևն վկայում են հեփաքի մի շարք արտահայտությունները, որոնք բնորոշ ևն միայն արևելյան լեզուներին, և որոնք բարգմանված ևն բառացիորեն («Повестьте уши вашего внимания на ветвях моих мыслей», «...Кто не пользуется случаем, сам от себя отнимает руки...», «Каждое твое слово как червонец ляжет в наши души» և այլն):

Միշտ հավատարիմ պարզ ու պատկերավոր պատմելիքներ, Քուժանյանը կրճատել է այն ամենը, ինչ խոր է հեփաքի ոճին՝ ավելորդ փուն արտահայտություններ, կեղծ նկարագրություններ: Հեփաքն սկսում է շոգ օրվա հետևյալ նկարագրությամբ. «Полуденное сирийское солнце палило беспощадно. Лучи его, как убийственные стрелы, сыпались на землю. Небо, воздух и земля казались раскаленными. Горный ветер ни одним дыханием не приносил прохлады: птицы, разинув клювы и распутив крылья, сидели неподвижно. Листья деревьев, как крылья усталых птиц, повисли в бессильи; цветы, как

¹⁴ М. Чистяков, «Весна», М., 1903, изд. Вольф, 47—56 стр.

¹⁵ Չ. Քուժանյանի, Երկերի ժողովածու, հ. 3, 1949, էջ 280:

¹⁶ Նույն տեղում, էջ 280:

больные, умирающие дети, с грустью опустили свои головки; в воздухе, казалось, замерли все звуки жизни, только бились и плескались одни фонтаны; но в них, обливаемых знойным солнцем, казалось тоже было жарко, и, мелкие брызги, разлетающиеся от них в сторону, прежде нежели могли принести какую-нибудь свежесть, испарялись»¹⁷.

Այս ամբողջ պարբերությունից, որ ամենին բնորոշ չէ հեֆիաթի ոճին. Քումանյանի մոտ միայն մի նախադասություն է մնացել. «Մի ամառվա շոգ օր էր, բայց չնայած անտանելի շոգին ու քեժ աղին, Քաղաղի փողոցները լինե էին ժողովրդով: Մի այլ տեղ նա բաց է բողնում 22 տողից բաղկացած մի հատված, ուր նկարագրվում է Հաբուն ալ-Ռաշիդ բազավուրի մոտոքը Բաղաֆ: Չիստյակովի տարբերակում նկարագրված են Բաբալանները, փղերը, գեղիները, բանասացները, խալիֆի հանդիսավոր շխախուրը: Այդ ամենը Քումանյանը փոխառիցել է «Վերջապես երևաց արհայական բափոքը» նախադասությամբ, որը ինքնըստինքյան խոսում է բողիքի հանդիսավորության մասին:

Քումանյանը ստեղծում է իսկական հեֆիաթ, հեֆիաթին բնորոշ առանձնահատկություններով, ժողովրդական բառերով ու դարձվածքներով: Սափի կնոջ նկարագրությունը Չիստյակովի տարբերակում ծիծաղելի է և անհերքելի թույլություն է բողնում. «... была у меня жена, удивительная жена, светлоокая и стройная как газель, быстрая и проворная как страус, умная как аравийский конь Йемена, неусыпная как звезда, терпеливая как осел, послушная как мышь». Իսկ Քումանյանը այդ ամբողջ նկարագրությունը փոխառիցել է «Ես մի գեղեցիկ խելոք ու աշխատասեր կին ունեի» անպահույն բառերով:

Քումանյանը վարպետորեն կարողացել է գտնել համարժեք ժողովրդական արտահայտությունները: Օրինակ՝ «Все были тронуты» արտահայտության փոխարեն նա դրել է «Ամենքի սիրտը շարժեց» համարժեքը, կամ՝ «Халиф сначала улыбнулся, потом задумался» արտահայտության փոխարեն՝ «Թագավորը ծպտաց, ապա քե մտքի տունն ընկավ». «... пошел мудрствовать»-ի փոխարեն՝ «խելքիդ գոռ մի տար...» և այլն:

Փողովուրդը հեֆիաթի մեջ իր փիլիսոփայությունն է դրել. ամենամեծ հարստությունը՝ առափնեությունն է: Առափնեությամբ փառաբանված մարդը չի մեռնում. նա ապրում է հավետ՝ օրինակ ծառայելով ուրիշներին: Խելքը մեծ գանձ է. նա ուժ է տալիս մարդուն, «խելքով՝ տկարն ուժեղ է, աղետը՝ հարուստ, վախկոտը՝ անհա»: Բայց ամենամեծ հարստությունը ժողովուրդը հուժարում է զբաղստությունը, առանց զբաղստության, ավելացնում է Քումանյանը, «... էս բոլորը համարյա քե սարսափելի ու կործանարար կլինեն մարդու համար: Առանց նրան աշխարհը կքայտվեր ու կամայանար»¹⁸:

Հետաբերի է յուրօրինակ է հեֆիաթի ավարտը: Ռուսական տարբերակում հեֆիաթն ավարտվում է նրանով, որ Հաբուն ալ-Ռաշիդին հաջորդող խալիֆները սկսում են գետաբարձիք բանկազին Բաբեր պատրաստել, «իսկ էր բուրբերը նվաճեցին այդ երկրամասը, ապա այս ամբողջպես բալանեցին, կողպուսեցին ոսկին, և այլևս չկա արդարադատության ու գրության Բաբեր»: Այսպես, ուրեմն, ժողովրդի երազանքը չիրագործվեց, արդարադատության Բաբեր անառնուցավ...

Հետաբերական է այն փաստը, որ իր մշակած հեֆիաթի սկզբնական տարբերակում (1914 թ.) Քումանյանը նետել է Չիստյակովի տարբերակին և հեֆիաթն ավարտել այսպես. «Քուրբների գալուց հետո անհայտացավ, կորավ էն անգին Բաբեր, որ աշխարհի հզորներին հիշեցնում էր արդարությունն ու խղճմտանքը»: Այդպիսի վատաստությունը բնորոշ չէր ոչ Քումանյանին և ոչ էլ ժողովրդական հեֆիաթին: Եթե իրավագույն ժողովրդի ապագան պատկերաճար այդպես անհեռանկար ու մոռյալ, չլին ստեղծվի հեֆիաթները, որոնք միշտ հանդիսացել են վատաստյան ապագայի մասին ժողովրդի ձգտումների, բաղձանքների և հույսերի արտացոլումը:

Ուստի 1916 թ. վերամշակելով հեֆիաթը զրոգը լիովին փոխել է նրա ավարտը, ընդգծելով ժողովրդի լավատեսությունը, հավատը: Ահա ինչպես է եզրափակվում հեֆիաթը. «Ավանդությունն ասում է, քե նրա (Հաբուն ալ-Ռաշիդի. — Ի. Ս.) նման էին վարվում նրա հաջորդները, արարական մյուս բազավուրները»:

Հնդկական և աբարական հեֆիաթներում զգալի տեղ է հատկացվում ունի իրագործությունների վերադարձությանը, կենդանի և գործնական ներուժերի նկարագրությանը:

¹⁷ М. ЧИСТЯКОВ, Весна, изд. Вольф, П.—М., стр. 47—56.

¹⁸ Քումանյանի, Իրկերի ժողովածու, 5, 3, Նրևան, 1949, էջ 284:

ժողովրդական ֆանտազիայի վառ առկայության և իրականի ու երևակայականի նաշակավոր միահյուսման պայմաններում, առաջին տեղն է զբաղում պատմական ուսուցիչական նշանակությունը, որը իր նատուկ դրսևորումն է գտնում այլևայլ ճեփաբներում:

Այսպիսով, Քումանյանը պահպանելով ժողովրդական բանասացի հատկությունները առաջին հերթին՝ պատմելու լանկանությունը, մեծ արվեստագետի վարպետությամբ նանգես է լինել չափի նուրբ զգացում, խոր զգայություն՝ ժողովրդի անկախությունների և մտածողության նկատմամբ:

Նա կարողացել է հայ բնթեցողին նասցնել արևելյան ժողովուրդների մտքերն ու բաղձանքները, երազանքներն ու ցանկությունները, ծանոթացնել նրանց կենցաղի, սովորությունների և պատմության նետ: